ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1493-21 առ "11" 06 2021թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2021թ.

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն. Ա.Զաքարյանին
E-mail: central.llc@yandex.com

[№01/032 առ 13.04.2021թ. պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Զաքարյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար առանցքակալների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 8-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1,2,4,5,6,10,13,17 և 21-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. ապրիլի 13-ին կնքվել է թիվ 01/032 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 1050108 (մեկ միլիոն հիսուն հազար հարյուր ութ) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 17-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ առանցքակալները, որոնց ընդհանուր գինը կազմում է 420000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի հետ 2021թ. ապրիլի 13-ին կնքած թիվ 01/032 պայմանագիրը 17-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60